# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Սարամեջ համայնք, հասցե գ. Սարամեջ
Հեռ.0255-6-00-58
էլ-փոստ saramej.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«10» փետրվարի 2020 թվականի N 06 - Ա

### ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասով և << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով`

Որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների 2020 թվականի ապրիլի 5-ի հանրաքվեի անցկացման համար Լոռու մարզի Սարամեջ համայնքի տարածքում տեղամասային կենտրոն սահմանել համայնքապետարանի դահլիճը (հասցեն` գ. Սարամեջ 1 փողոց 2 նրբ. թիվ 12):
2. Սույն որոշման մասին տեղեկացնել` ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության տարածքային ստորաբաժանմանը, թիվ 22 տարածքային ընտրական հանձնաժողովին և տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետողին:

ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` Հ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

գ.Սարամեջ (10.02.2020թ.) Կ.Տ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Սարամեջ համայնք, հասցե գ. Սարամեջ
Հեռ.0255-6-00-58
Էլ-փոստ saramej.lori@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 14 » փետրվարի 2020 թվականի N 07- Ա

### ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 5-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՐԱՔՎԵԻ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 3-րդ մասի , «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ մասով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

2020 թվականի ապրիլի 5-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի «ԱՅՈ» և «ՈՉ» քարոզչության կողմերի կողմից քարոզչական պաստառներ փակցնելու համար ՀՀ Լոռու մարզի Սարամեջ համայնքի տարածքում առանձնացնել հետևյալ անվճար տեղերը՝

1) համայնքի կենտրոնական հատվածում 20 քմ (5 փողոց թիվ 1 հասցե 10քմ), (5 փողոց թիվ 4 հասցե 10քմ)

2) 1 փողոցի ճանապարհամերձ հատվածում 30քմ (1 փողոց 2 նրբանցք թիվ 1 հասցե 15քմ), (1 փողոց թիվ 1 հասցե 15քմ)

Սույն որոշումը ներկայացնել Լոռու մարզպետարան:

ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Գ. Սարամեջ ( 14 փետրվարի 2020 թ. ) Կ. Տ.